ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԷԱՃ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ Պետական պահպանության ծառայությունը, որը գտնվում է ք. Երևան Պռոշյան փ. 1-ին փակուղի 20 հասցեում, ստորև ներկայացնում է ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-1/2022-13 ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքում 18.04.2022թ. կնքված ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-1/2022-13-1 զնման Պայմանագրում(այսուհետև՝ Պայմանագիր) 2022թ.-ի մայիսի 26-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

**Փոփոխության պատճառ:** Փոփոխությունն իրականացվել է հաշվի առնելով Պատվիրատուի և Կատարողի միջև կնքված համաձայնագիրը:

**Փոփոխության նկարագրություն և հիմավորում:** Հիմք ընդունելով 18.04.2022 թվականին կնքված N ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-1/2022-13-1 պայմանագրի 8.5 և 8.8 կետերը և 24.05.2022 թվականին «Գայանե Հակոբյան Գևորգի» ԱՁ-ից ստացված գրությունը, կողմերը համաձայնության եկան պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով և ապրանքների մատակարարման վերջնաժամկետ սահմանել 2022թ. հունիսի 30-ը:

Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արհեստական փոփոխությունների շարքին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Սյուզաննա Խուրշուդյանին:

Հեռախոս՝ 010 – 53-23-58

Էլ. Փոստ՝ x_syuzi.91@mail.ru

Պատվիրատու՝ Պետական պահպանության ծառայություն

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

N ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-1/2022-13-1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք.Երևան <<26>> <<05>> 2022թ.

Պետական պահպանության ծառայությունը, այսուհետ՝ <<Գնորդ>>, ի դեմս Պետական պահպանության ծառայության պետ Ս. Հովհաննիսյանի, որը գործում է <<Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի և Պետական պահպանության ծառայության կանոնադրության հիման վրա, մի կողմից և <<Գայանե Հակոբյան Գևորգի>> ԱՁ -ն, այսուհետ՝ <<Վաճառող>>, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 18.04.2022 թվականին կնքված N ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-1/2022-13-1 պայմանագրի 8.5 և 8.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև Համաձայնագիր) հետևյալի մասին:

### 1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Հիմք ընդունելով 24.05.2022 թվականին <<Գայանե Հակոբյան Գևորգի>> ԱՁ-ից ստացված գրությունը, կողմերը համաձայնության եկան պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացույցային օրով և ապրանքների մատակարարման վերջնաժամկետ սահմանել 2022թ. հունիսի 30-ը:

1.2 Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 30.06.2022 թվականը ներառյալ:

### 2.Մատակարարման պայմանագիրը

2.1 Վաճառողը պարտավորվում է ապրանքը մատակարարել 18.04.2022 թվականին կնքված N ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-1/2022-13-1 պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան:

2.1.1 Կողմերը եկան համաձայնության 18.04.2022 թվականին կնքված N ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-1/2022-13-1 պայմանագրի հավելված 2-ը հաստատել ներքոհիշյալ խմբագրությամբ՝

### 3.Ապրանքի գինը, մատակարարման պայմանները

3.1 Սույն համաձայնագրով Վաճառողի կողմից մատակարարվելիք ապրանքի գինը ներկայացված է պայմանագրի Հավելված 2-ում: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 643500.00 AMD(վեց հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր դրամ ) ՀՀ դրամ:

3.2 Պայմանագրի գինը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարները,ինչպես նաև կատարողի կողմից իրականացվող ծախսերը:

## 4 Այլ պայմաններ

4.1 Սույն համաձայնագիրը հանդիսանում է 18.04.2022 թվականին կնքված N ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-1/2022-13-1 պայմանագրի անբաժանելի մասը:

4.2 Սույն պայմանագրում չնշված՝ կողմերի գնման պայմաններով նախատեսված իրավունքները և պարտականությունները, ապրանքի հանձնման և ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Պետական պահպանության ծառայություն | Գայանե Հակոբյան ԱՁ |
| ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20 | ք. Երևան , Շենգավիթ, Չեխով փ. 50 շենք, բն. 16 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | Այդի Բանկ ՓԲԸ |
| Հ/հ 900011004497 | Հ/հ 11817068734700 |
| ՀՎՀՀ 00006796 | ՀՎՀՀ 35197258 |
| Պետ՝ Ս. Հովհաննիսյան | ԱՁ Գ. Հակոբյան |

Հավելված N 2
18/04/2022թ. կնքված
ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-1/2022-13-1 ծածկագրով պայմանագրի

# ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 1 | զույգ | 6435.00 | 643500.00 | 100 | ք. Երևան Պռոշյան 1-ին փակուղի 20 | 100 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած բայց ոչ ուշ քան 30.06.2022թ. |

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Պետական պահպանության ծառայություն | Գայանե Հակոբյան ԱՁ |
| ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20 | ք. Երևան , Շենգավիթ, Չեխով փ. 50 շենք, բն. 16 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | Այդի Բանկ ՓԲԸ |
| Հ/հ 900011004497 | Հ/h 11817068734700 |
| ՀՎՀՀ 00006796 | ՀՎՀՀ 35197258 |
| Պետ՝ Ս. Հովհաննիսյան | ԱՁ Գ. Հակոբյան |